



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Լևոն Զաքոյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Լևոն Զաքոյանը 2018 թվականի փետրվարի 6-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետը, իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»: Դիմողը միջնորդություն է ներկայացրել առ այն, որ «...«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «Իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու հնարավորության դեպքում» բառակապակցությունը դիտարկել նույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ և դրան տալ այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության՝ «Իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու

հնարավորության դեպքում» բառակապակցությունը նշանակում է իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու **փաստացի** հնարավորություն»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Նշան Համբարձումյանի ներկայացուցիչը 13.01.2016 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Կադաստրի՝ պահանջելով, ի թիվս այլնի, անվավեր ճանաչել և վերացնել ք. Երևան, Կենտրոն, Թումանյան փողոց 11 շենք, 44 ոչ բնակելի տարածք հասցեով անշարժ գույքի նկատմամբ 04.09.2015թ. Արա Թադևոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, 15.09.2015թ. Լևոն Զաքոյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 23.02.2017 թվականի վճռով բավարարել է վերը նշված պահանջները:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 25.10.2017 թվականի որոշմամբ դիմողի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը մերժել է՝ ՀՀ վարչական դատարանի 23.02.2017 թվականի վճիռը թողնելով անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 20.12.2017 թվականի որոշմամբ մերժել է դիմողի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը մատնանշում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի և 64-րդ հոդվածի 1-ին մասի ուսումնասիրությունից բխում է, որ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ոչ թե դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից, այլ վարչական ակտն ընդունելու պահից, եթե վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի ընդունման համար ներկայացրել է, ի թիվս այլնի, կեղծ փաստաթուղթ, որը կեղծվել է իր մասնակցությամբ կամ իր գիտությամբ: Այստեղից էլ բխում է, որ եթե վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի ընդունման համար ներկայացրել է, ի թիվս այլնի, կեղծ փաստաթուղթ, որի կեղծման հետ որևէ առնչություն չունի, ապա այդ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ոչ թե վարչական ակտն ընդունելու պահից, այլ այն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից: Մինչդեռ, ըստ դիմողի, խնդրո առարկա գործով ՀՀ վարչական և ՀՀ վարչական վերա-

քննիչ դատարանները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետին հաղորդել են այնպիսի բովանդակություն, համաձայն որի՝ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է վարչական ակտն ընդունելու պահից, եթե վարչական ակտը, վարչական ակտի հասցեատիրոջ կամքից անկախ, հիմնվում է, թիվս այլոց, կեղծ փաստաթղթի վրա: Այսինքն, դիմողի պնդմամբ, իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող դրույթին հաղորդված բովանդակությունը հաշվի չի առնում վարչական ակտի հասցեատիրոջ մեղավորությունը՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքը:

4. Լևոն Զաքոյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Լևոն Զաքոյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Մույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 փետրվարի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-6